		Հավելված ՀՀ փոխվարչապետի 2019 թ. նոյեմբերի 8 -ի N 759 - Ա որոշման
		ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ **ԾՐԱԳԻՐ**
1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) նպատակն է բարձրացնել գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելը ներառում է զուգահեռաբար իրականացվող կրթական, առողջապահական, սոցիալ-հոգեբանական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների վերանորոգումներ, բարելավումներ: Կրթական ծրագրի նպատակն է շահառու համայնքներում առաջադեմ կրթական միջավայր ստեղծել ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով: Առողջապահական ծրագրի նպատակն է պահպանել և բարելավել գյուղերում ապրող երեխաների և մեծահասակների առողջությունը և կանխարգելել հիվանդությունների առաջացումը՝ շեշտադրելով առողջ ապրելակերպի խրախուսումը և որակյալ առաջնային առողջապահական ծառայությունների հասանելիությունը: Երեխայի և ընտանիքի աջակցության ծրագրի նպատակն է ձևավորել ամուր և հոգեպես առողջ, ինքնակազմակերպված համայնքներ, որոնք ի վիճակի են հոգ տանել համայնքի երեխաների մասին՝ ապահովելով երջանիկ մանկություն, բազմակողմանի զարգացում և խոստումնալից ապագա: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ի ստեղծման նպատակն է նպաստել գյուղական համայնքների արագ զարգացմանը՝ դրանք աշխարհին հաղորդակից դարձնելու միջոցով: Որպես ոչ ֆորմալ կրթական ծրագրի մաս կազմող գերազանցության կենտրոն՝ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ը ժամանակակից հաղորդակցային ու տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով աշխարհի լավագույն մասնագետներին ու ռեֆորմատորներին կապում է գյուղերի հետ՝ տարածելով կրթության, առողջապահության, արվեստի, գիտության, շրջակա միջավայրի ու տեխնոլոգիայի բնագավառների առաջատար փորձն ու մեթոդները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագիրը բարեգործական որակելուց հետո հիմնադրամի կողմից կնքված հարակից գործարքները և ներմուծվող բեռները կստանան հնարավորություն ազատվելու ԱԱՀ-ից, օգտվելու ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից, ինչը և կօգնի հիմնադրամին ավելի շատ ներդրումներ կատարել համայնքներում: Ներմուծվող բեռները կստանան օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններ:

3.	Բարեգործները	Children of Armenia Fund Inc. New York, USA. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և Գարո Հ. Արմենը (149 5th Ave., Suite 500, New York 10010, USA).
4.	Ծրագիր կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ, ՀՎՀՀ02569972, ՀՀ ք.Երևան 0001, Հյուսիսային պող 1, 8-րդ հարկ, 24 սենյակ
5.	Ծրագրի իրականացման վայրը - բնագավառը	ՀՀ Արմավիր, Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ մարզերը: Բնագավառը՝ բարեգործական ծրագրեր համայնքների բնակիչներին, այդ թվում նյութեր, պարագաներ, սարքավորումներ և այլ բեռներ ներմուծելու միջոցով: Կրթական, առողջապահական, սոցիալական, տնտեսական և գյուղատնտեսական ծրագրերի իրականացում: Շինարարական նյութերի ձեռքբերում և շինարարություն:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է **4,277,820** /չորս միլիոն երկու հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր քսան/ ԱՄՆ դոլար:
7.	Բարեգործություն ստացողը	**ՀՀ Արմավիրի մարզ.** Քարակերտ, Մյասնիկյան, Լեռնագոգ, Դալարիկ, Շենիկ, Հացիկ, Վանանդ, Գետաշեն, Սարդարապատ, Արգինա, Երվանդաշատ, Բագարան և Բաղրամյան համայնքները: **Արագածոտնի մարզ.** Արտենի և Արագածավան համայնքները: **Լոռու մարզ.** Թումանյան, Դսեղ, Քարինջ, Մարց, Դեբետ, Եղեգնուտ, Վահագնի, Ձորագյուղ, Աքորի, Մեծ Այրում, Արևածագ, Անտառամուտ, Ձորագետ, Փամբակ, Վահագնաձոր, Օձուն, Չկալով, Դարպաս, Բազում, Լերմոնտովո, Ազնվաձոր, Արջուտ, Լորուտ, Մարգահովիտ, Գուգարք, Շահումյան, Լեռնապատ, Հագվի, Սանահին, Ալավերդի և Վանաձոր համայնքները: **Տավուշի մարզ.** Արճիս, Պտղավան, Բերդավան, Ձորական, Կոթի, Այգեհովիտ, Նավուր, Վազաշեն և Կիրանց համայնքները: **Շիրակի մարզ.** Վարդաքար, Բենիամին, Մեղրաշեն, Հոռոմ, Գուսանագյուղ, Լանջիկ և Սառնաղբյուր համայնքները:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01/02/2019թ. - 31/12/2020թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	**Տնտեսական ծրագիր - 120,000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար, որը ներառում է հետևյալ բաղադրիչները՝** ՍՄԱՐԹ ավանի հյուրատան ձեռնարկատիրական գործունեություն Զբոսաշրջության զարգացում և այլն:
		Առողջապահական ծրագիր - 401.932 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար, որը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ • Գյուղական բուժհաստատությունների վերանորոգում և վերազինում • Դպրոցներում առողջության խրախուսում • Դպրոցական ճաշարանների վերանորոգում և սննդի, հիգենիկ պարագաների անվճար մատակարարում: Սննդակարգի կազմում մասնագետների խորհրդով: Ճաշարաններում սանիտարական զննումներ ու կարգավորումներ և այլն • Բերանի խոռոչի հիգիենայի խրախուսում և անվճար ատամնաբուժական ծառայություններ երեխաներին • Դպրոցի ճաշարանին կից ատամակայանների (ատամների մաքրման և ձեռքերի լվացման անկյուններ) հիմնում • ԱԱՊ օղակի բուժաշխատողների վերապատրաստում • Բնակչության առողջապահական կրթում • Առողջ ապրելակերպի սեմինարներ և խմբակներ դպրոցներում • Առողջության խրախուսմանն ուղղված դրամաշնորհ դպրոցներին • Առողջ ապրելակերպի դասընթացավարների վերապատրաստում • Բնակչության զանգվածային զննումներ
		Կրթական ծրագիր - 688,639 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար, որը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ • Գյուղական կրթական հաստատությունների ամբողջական կամ մասնակի վերանորոգում և վերազինում • Մասնագիտական կողմնորոշման դասընթացներ • Արտադասարանային խմբակներ /սպորտ, արհեստ, արվեստ, մեդիագրագիտություն, բանավեճ, ԱՖԼԱԹՈՒՆ սոցիալ-ֆինանսական կրթություն և այլն/ • Ամառային դպրոցներ և ճամբարներ • Աշակերտական խորհուրդների աջակցություն • Ուսանողների զարգացմանն ուղղված ծրագրեր /կրթաթոշակների տրամադրում, պրակտիկա, մենթորություն և այլն/ Անգլերենի ուսուցում

		Երեխայի և ընտանիքի աջակցություն ծրագիր - 337,279 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար, որը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ • Սոցիալական աշխատողի մասնագիտական աջակցություն/խորհրդատվություն • Հոգեբանական ծառայություն • Դպրոցների հոգեբանների վերապատրաստում • Լոգոպեդական և հատուկ մանկավարժական ծառայություն • Ուսման դժվարություններ ունեցող երեխաների աջակցություն • Թատերական թերապիա Մանկան զարգացման կենտրոնների և Արևոտ անկյունների հիմնում և աջակցություն
		Ենթակառուցվածքների ծրագիր - 1,324,000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար, որը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ • Սմարթ ավանի հանրակացարանի կառուցում • Սմարթ ավանի բուժ հաստատության կառուցում • Սմարթ սենյակների և Սմարթ ապահով սենյակների վերանորոգում և հիմնում • Սպորտային դահլիճների վերանորոգում • Դասարանների վերանորոգում • Խաղահրապարակների վերանորոգում • Մանկապարտեզների վերանորոգում • Ստեղծագործարանների հիմնում և վերազինում • Երիտասարդական կենտրոնների կառուցում/վերանորոգում և վերազինում

		ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ծրագիր - 1,162,538 **ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար, որը ներառում է հետևյալը՝** Նախաձեռնության երկու հիմնական բաղկացուցիչներն են ՔՈԱՖ ՍՄԱՐԹ սենյակները և ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնը: Տեղակայված լինելով համայնքային կենտրոններում և դպրոցներում՝ սենյակները միտված են համայնքի բնակչների համար հասանելի դարձնելու Հայաստանի մանուկներ հիմնադրամի ծրագրերը և ծառայելու որպես համայնքային միջոցառումների կազմակերպման համար նախատեսված տեխնիկապես հագեցած և նորարար միջավայր ապահովող տարածք: Սենյակներում պարբերաբար կազմակերպվում են ռոբոտաշինության, մեդիագրագիտության, արվեստի, արհեստի և այլ ոլորտների ծրագրեր, ինչպես նաև շարունակական բնույթ կրող նախագծեր, ինչպիսիք են Մենք ենք մեր գյուղը, Ճանաչել զիմաստություն և այլն: Նախատեսվում է, որ սենյակներն աստիճանաբար կվերածվեն ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի արբանյակների, և կենտրոնի շատ ծրագրեր սենյակներում կընթանան հեռաուսուցման եղանակով: Կենտրոնը ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանի մի մասն է մասնագետների ու հյուրերի համար նախատեսված հյուրատան հետ միասին: Առաջիկա տարվա մեջ ավանը կհամալրվի հավելյալ ենթակառուցվածքներով' դառնալով ոչ ֆորմալ կրթության համալիր: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ի առաջարկած ծրագրերը բոլորի համար են, սակայն թիրախը 3-35 տարիքային խումբն է: Կենտրոնը հնարավորություն ունի ամեն օր ընդունելու շուրջ 500 մարդու: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի ծրագրային չորս հիմնասյուներն. • Նորարարությունը և ստեղծարարությունը • Լեզուն և հաղորդակցությունը • Անձնային զարգացումն ու ակտիվ քաղաքացիությունը • Տեղական տնտեսական զարգացումը Կենտրոնում առաջարկվող ծրագրերն առնչվում են և՛ կրթությանը, և՛ տնտեսական զարգացմանը՝ ներառելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, պատանիների ու մեծերի համար նախատեսված արհեստագործական ու մասնագիտական դասընթացները, սպորտն ու ֆիթնեսը, առողջապահությունը, երեխայի զարգացումն ու մեդիագրագիտությունը: Ամենօրյա դասընթացները վերաբերում են գիտությանը, բլոկչեյնին, ռոբոտիկային, ծրագրավորմանն ու կոդավորմանը, անգլերեն լեզվին, թատրոնին, երաժշտությանն ու պարին, գյուղատնտեսությանը, արվեստին, վեբ դիզայնին ու գրաֆիկական դիզայնին, հավելվածների մշակմանը: Հիմնադրամը համագործակցում է համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսին է SAP-ն՝ նպատակ ունենալով մասնագիտական ու ակադեմիական աշխարհի բարձրակարգ ռեսուրսները բերել Հայաստանի գյուղական շրջաններ: Հիմնադրամի ծրագրերի ու SAP-ի Next-Gen լաբորատորիայի միջոցով աշակերտները կօգտվեն SAP-ի կրթական ռեսուրսներից, որոնք առնչվում են վիրտուալ իրականության դիզայնին, iOS հավելվածի մշակմանը, բլոկչեյնին: Այդ թեմաները կօգնեն աշակերտներին տեխնոլոգիայի բնագավառում կարիերա կառուցել: Նախատեսված է, որ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ի մոդելը վերարտադրվելու է ամբողջ գյուղական Հայաստանում՝ նպատակ ունենալով ոգեշնչելու և նպաստելու հսկայական ռեսուրսներ ունեցող բնակչության զորացմանը: Մեր տեսլականն է կառուցել էլ ավելի շատ ՍՄԱՐԹ կենտրոններ, որոնք կծառայեն Հայաստանի բոլոր գյուղերին: Մեր հայաստանյան ու միջազգային գործընկերները ոգևորված

		են, պատրաստ են գործել և ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ի գաղափարը դիտարկում են որպես մի մոդել, որը կարող է վերարտադրվել աշխարհի այլ երկրներում Կենտրոնի ծրագրերն են. • Այգեգործություն • Գյուղատնտեսություն • Նկարչություն • Դիզայն • Երաժշտություն • Թվային նկարչություն • Պար • Արհեստ • Լեզուներ • Ռոբոտաշինություն • Քաղաքացիական ակտիվության ծրագրեր • Տեղեկատվական տեխնոլոգիաներ • Սպորտ • Մեդիա գրագիտություն • Արհեստներ • Մանկան զարգացման ծրագրեր • Ծնողավարություն • Սոցիալ-հոգեբանական ծրագրեր • Գիտություններ (մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն)
		Կազմակերպչական ծախսեր - 243,432 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: Մանրամասն ներկայացված է ծրագրի 11 -րդ կետում:
10.	Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել 800,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդամթերք, գրասենյակային պիտույքներ, համակարգչային տեխնիկա, թարգմանչական սարքավորումներ, բարձրախոսներ, խոսափողներ, երաժշտական գործիքներ, երաժշտական մասնագիտական բաղադրիչ տարեր, կահույք, բուժ. պարագաներ և սարքավորումներ, սանտեխնիկա, շինանյութ, արևային պանելներ, ֆոտովոլտային կայաններ, շին. տեխնիկա,

	համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	գյուղ.տեխնիկա, տրանսպորտային միջոցներ, շապիկներ, սպորտային համազգեստ, հագուստ և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարեգործական բեռների ներմուծում 500,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի շրջանակներում մասնավորապես հագուստ, համակարգչային տեխնիկա, թարգմանչական սարքավորումներ, բարձրախոսներ, խոսափողներ, երաժշտական գործիքներ, երաժշտական մասնագիտական բաղադրիչ տարեր, կահույք, բուժ. պարագաներ և սարքավորումներ, գրքեր, գրենական պիտույքներ, կենցաղային տեխնիկա, շինարարական նյութեր, արևային պանելներ, ֆոտովոլտային կայաններ և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել ծառայության մատուցման պայմանագրեր 200,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի շրջանակներում, մասնավորապես դասընթացների կազմակերպում, տրասնպորտային ծառայություններ, սննդի մատակարարման ծառայություններ, հոգեբանական խորհրդատվության ծառայություններ, բուժ օգնության ծառայություններ և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել պայմանագրեր կապալառուների հետ՝ նախագծային, շինարարական, հսկողական աշխատանքների կատարման համար, առողջապահական, հետազոտական, սոցիալական ծրագրերի իրականացման համար, փորձագետների մասնագիտական վերահսկողական, ուսուցողական ծառայությունների և տպագրական ծառայությունների համար: Ծրագրերն ավելի մանրամասն ներկայացված են ծրագրի 9-րդ կետում:
11.	Կազմակերպչական ծախսեր	**Կազմակերպչական ծախսերը 01/02/2019թ.-31/12/2020թ. ժամանակահատվածի համար կազմում են - 243,432 ԱՄՆ դոլար, որը ներառում է հետևյալ բաղադրիչները՝** • Գրասենյակային պարագաներ - 630 ԱՄՆ դոլար • Սպասարկում և վերանորոգում - 1,620 ԱՄՆ դոլար • Բանկային ծախսեր - 1,440 ԱՄՆ դոլար • Կահավորում - 5,000 ԱՄՆ դոլար • Մերսեդես «ՎԻՏՈ» մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում - 70,000 ԱՄՆ դոլար • Գործուղումներ - 1,200 ԱՄՆ դոլար • Կոմունալ հատկացումներ - 1,260 ԱՄՆ դոլար • Կապ - ինտերնետ - 1,260 ԱՄՆ դոլար • Իրավաբանական խորհրդատվության մատուցում - 25,200 ԱՄՆ դոլար • SS ծառայություններ - 2,250 ԱՄՆ դոլար • Ապահովագրություն - 2,160 ԱՄՆ դոլար • Աուդիտ - 8,000 ԱՄՆ դոլար • Տրանսպորտային ծախսեր - 4,800 ԱՄՆ դոլար • Այլ գրասենյակային ծախսեր - 2,157 ԱՄՆ դոլար • Միջոցառումների կազմակերպում - 21,720 ԱՄՆ դոլար • Հասարակայնության հետ կապեր և համագործակցության ծախսեր - 2,400 ԱՄՆ դոլար • Մարքեթինգային և գովազդային ծախսեր - 4,000 ԱՄՆ դոլար

		• Տարածքի վարձակալություն - 9,360 ԱՄՆ դոլար Ադմինիստրատիվ անձնակազմի աշխատավարձ - 78,975 ԱՄՆ դոլար
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել ՀՀ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, բանկերի և միջազգային կազմակերպությունների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund հիմնադրամի, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ